



# CARE Դատարան՝ Հոգեկան առողջության նոր ռեսուրս՝ Վերականգնման և Հզորացման աջակցություն-

Նորացված՝ 11.16.2023

## Ինչ է CARE Court-ը

Մեր համայնքում մարդիկ առերեսվում են ծանր հոգեկան հիվանդությունների հետ և, հնարավոր է, չկարողանան ստանալ կանոնավոր օգնություն, ինչը հաճախ հանգեցնում է անտնությանը և արգելված նյութերի օգտագործմանը: Նրանց սիրելիները և խնամք իրականացնող անձինք հաճախ պայքարում են՝ գտնելու կյանք փրկող աջակցություն և օգնություն:

Լոս Անջելես Վարչաշրջանը մեկնարկում է նոր, նահանգի կողմից ֆինանսավորվող ծրագիր, որի անվանումն է Համայնքի՝ Օգնության, Վերականգնման և Հզորացման (CARE) Court, որն օգնում է մարդկանց, որոնք ունեն այնպիսի ծանր, չբուժված հոգեկան առողջության խնդիրներ, ինչպիսին է շիզոֆրենիան, ստանալ բուժում և ծառայություններ՝ ուղղված նրանց առողջությանը և բարեկեցությանը: Բանտերի և շտապ օգնության սենյակների միջով շրջելու փոխարեն CARE Դատարանը խոցելի անձանց և նրանց խնամող մարդկանց մեկ այլ ծրագիր է տրամադրում՝ նրանց անվտանգությունը ապահովող առանցքային ծառայությունների հասանելիության համար: Ընտանիքի անդամներ, սենյակակիցներ, բժիշկներ և այլ անձինք կարող են դիմել՝ այս ծրագրի համար հաստատում ստանալու նպատակով:

Los Angeles County Department of Mental Health (LACDMH) ուրախությամբ առաջարկում է CARE Court-ը որպես ծրագրերի ընդլայնված ցանկի մաս՝ ապահովելու հոգեկան առողջության առումով օգնություն դրա կախիքը ունեցողներին:

## Ի՞նչ ծառայություններ է տրամադրում CARE-ը:

Փորձագետների թիմ, ներառյալ բժիշկները, խորհրդատուները, գործի կառավարիչները, սեփական փորձով մարդիկ և այլք, աշխատում են յուրաքանչյուր մասնակցի հետ՝ Ստեղծելու CARE ծրագիր՝ բուժման անհատականացված ծրագիր, որը համապատասխանում է նրանց հատուկ կարիքներին: CARE ծրագիրը կարող է ներառել բազում տեսակների օգնություն, ներառյալ խորհրդատվությունը, դեղորայքը, կացարանով ապահովումը, սոցիալական ծառայությունները և այլն: CARE ծրագիրը անկարողություն ունեցող անձի խնամակալություն չէ և մասնակիցները, այնուամենայնիվ, կկարողանան արտահայտել իրենց նախասիրությունները բուժման վերաբերյալ և կայացնել սեփական որոշումները ծրագրին մասնակցելու, դեղորայքն ընդունելու և նրանց խնամքի այլ բնագավառների վերաբերյալ:

## Ո՞վ է պայմանունակ մասնակցելուն:

CARE ծրագիրը նախատեսված է օգնելու չափահասներին, ովքեր ունեն ծանր, չբուժված հոգեկան հիվանդությունների **հատուկ տեսակներ**: CARE ծրագրին պայմանունակ լինելու համար մասնակիցը պետք է՝

- Լինի 18 տարեկան կամ ավելի բարձր
- Ախտորոշվել է շիզոֆրենիա կամ այլ կապակցված հոգեկան խանգարում
- Ներկայում ունենա վարք և ախտանիշներ, որոնք կապված են այս ծանր հոգեկան հիվանդության հետ
- Ստանալիս չլինի շարունակվող կամավոր բուժում

Իմանալու համար ավելին արդյոք Ձեր սիրելի պայմանունակ է CARE ծրագրի համար և լրացուցիչ հարցեր տալու համար խնդրում ենք այցելել [dmh.lacounty.gov/care-court](http://dmh.lacounty.gov/care-court) կամ զանգահարել 1-800-854-7771:

**Խնդրում ենք ժամանակ հատկացնել պայմանունակության մասին իմանալու համար ՆԱԽՔԱՆ դիմելու պաշտոնական ընթացակարգով առաջ գնալը:**

Ոչ բոլորն են համապատասխանում CARE ծրագրին: Այնուամենայնիվ, [LACDMH](http://LACDMH)-ը տրամադրում է բազում լրացուցիչ ծրագրեր, որոնք կարող են օգնել:



## Ինչպես կարող եմ սկսել CARE Ընթացակարգը:



Ընթացակարգը սկսվում է, երբ ընտանիքի անդամը, սենյակակիցը կամ այլ պայմանունակ անձը **լրացնում է CARE Act** դիմում: Դատավորը որոշում է, արդյոք հնարավոր մասնակիցը համապատասխանում է CARE ծրագրի չափանիշներին:

Եթե մասնակիցն ընդունվում է CARE ծրագիր, ապա նրանց CARE թիմը աշխատում է նրանց հետ՝ մշակելու համար ծրագիր, որը կտրամադրի նրանց կարիքներին հարմարեցված ծառայություններ: Ծրագիրը անձին կտրամադրի ծառայություններ մինչև մեկ տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել մեկ տարով, եթե այդպիսի ընտրություն կատարվի կամ լինի դրա կարիքը: Պարբերաբար կնշանակվեն վերանայման վերաբերյալ լուծումներ՝ առաջընթացը գնահատելու և ծառայությունների արագ տրամադրումն ապահովելու համար:

## Ի՞նչ իրավունքներ ունեն մասնակիցները:

Ծրագիրը բացառապես կամավոր է: CARE-ի նպատակն է օգնել բնակիչներին ստանալ աջակցություն, որի կարիքը նրանք ունեն, հնարավոր նվազագույն սահմանափակող եղանակով: Այն պաշտպանում է մասնակիցների՝ իրենց սեփական որոշումները կայացնելու իրավունքները, նրանց տալով անվճար իրավաբանական ներկայացուցչություն և թույլ տալով նրանց ընտրել աջակից, ով կարող է նրանց օգնել անցնել ընթացակարգով: Մասնակիցներին հնարավոր չէ ստիպել մասնակցել ծառայություններին նրանց կամքին հակառակ (ներառյալ դեղորայքի ընդունումը) և նրանք կարող են դուրս գալ ծրագրից ցանկացած պահի: CARE ընթացակարգին չմասնակցելու որոշման դեպքում գոյություն չունեն որևէ քաղաքացիական և քրեական պատիժներ:



## Ի՞նչ անել, եթե որևէ մեկը չի համապատասխանում CARE-ին:

Եթե որևէ մեկը, ում գիտեք, ունի օգնության կարիք, ապա առկա են շատ ռեսուրսներ նրանց անվտանգությունը ապահովելու և նրանց բարեկեցությանը աջակցելու համար:

**Ջանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք 988**

համարին՝ Ինքնասպանությունների և Ճգնաժամերի Հարցերով Կենսական Թեժ Գծին՝ հոգեկան առողջության խնդիրների համար:

**Ջանգահարեք 1-800-854-7771 (24/7 Օգնության Գիծ)**

տվյալ բնագավառում գործող՝ ճգնաժամի արձագանքման թիմերի կամ հոգեկան առողջության ռեսուրսների համար LACDMH միջոցով:

**Ուղարկեք "LA" հաղորդագրությունը 741741**

համարին՝ միանալու վերապատրաստում անցած՝ ճգնաժամերի հարցերով խորհրդատուի՝ հաղորդագրության միջոցով ճգնաժամի առումով աջակցություն ստանալու համար:

Լրացուցիչ ռեսուրսներ և օգնության գծեր են առկա LACDMH Get Help Now Կայքում՝ [dmh.lacounty.gov/get-help-now](http://dmh.lacounty.gov/get-help-now)

[dmh.lacounty.gov/get-help-now](http://dmh.lacounty.gov/get-help-now)

**CARE-ի և ժանր հոգեկան հիվանդություն ունեցող մարդկանց օգնության այլ ռեսուրսների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [dmh.lacounty.gov/care-court](http://dmh.lacounty.gov/care-court)**